ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՍԽ ԳՅՈՒՂԻ ԱՎԱԳԱՆՈՒ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հունվարի 2014 թվական **N 1**

2014թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով , Տեղական Ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի՝ 18 կետով և, Տեղական Տուրքերի և վճարների մասինե Հայաստանի Հանրապետության օրենքով

Որոշում է հաստատել Երասխ գյուղի՝ 2014թ.-ի տեղական տուրքեր և վճարները՝ ըստ հավելված 1-ի

Կողմ 5	Դեմ	Չեռնպահ
1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ		
2. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՂԱՍԻ		
3. ԱՅՎԱԶՅԱՆ ՍԱՄՎԵԼ		
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳՅՈՒԼՆԱՐԱ		
5. ԽՈՒԴՈՅԱՆ ԽԴՐ		

ՄԱՐԶ ԵՐԱՍԽ ԳՅՈՒՂ ARARAT ERASKH VILLAGE 04101167

ԳՅՈՒՂԱՊԵՏ՝ ՌԱԴԻԿ ՕՂԻԿՅԱՆ

Հավելված 1
Երասխ գյուղի ավագանու
2014թ հունվարի 10-ի թիվ 1որոշման

2014թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԵՎ ՎՃԱՐՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- Երասխ համայնքում 2014թ.- ի համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերին՝
նոր շենքերի,շինությունների/ներառյալ ոչ հիմնական/ շինարարական /տեղադրման/ թույլտվության համար՝
ա - մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում՝այգեգործական /ամառանոցային/ տների ինչպես նաև մինչև 200
քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝15.000դրամ:
բ - սույն կետի « ա » ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝30.000դրամ
- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝50.000դրամ
- 1001-ից ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝70.000դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝
ա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝5000դրամ
բ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝5000դրամ

2) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների բացառությամբ:
ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերում/համար եթե սահմանված կարգով հաստատված կարգով ճարտարապետաշինարարական նախագծով՝
ա) չի նախատեսվում կցակառույցների, շենքի գաբարիտային չափերը ընդլայնող այլ կառույցների
(այդ թվում՝ ստորգետնյա)
հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի՝ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության համար՝3000 դրամ,

բ) բացի օբյեկտի վերակառուցման,
ուժեղացման,վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից,նախատեսվում է նաև
կցակառույցների,վերնակառույցների շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների(այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր
մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն,բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված նորմերի՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.
գ)նախատեսվում է միայն կցակառույցների,վերակառույցների,շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա)
շինարարության կամ շենքերի գործառնական նշանակության ապա այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերի.

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի,
շինությունների,քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է՝5000դրամ:
4)Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
ա) ոգելից խմիչքների վաճառքի թույլատվության համար՝հիմնական շինությունների ներսում
վաճառքի կազմակերպման դեպքում՝յուրաքանչյուր եռամսյակի համար՝3000դրամ:
բ) ծխախոտի վաճառքի թույլատվության համար՝հիմնական շինությունների ներսում
վաճառքի կազմակերպման դեպքում՝յ շուրաքանչյուր եռամսյակի համար՝3000դրամ:

5) Համայնքի տարածքում՝
ա) բացոթյա առևտուր կազմակերպելու թույլատվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝350դրամ:
բ) հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,
հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,
հեղուկացված գազերի վաճառքի թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝100.000դրամ:
գ)համաձայն ՀՀկառավարության սահմանած ցանկում ընդգրկված
սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերի խանութներում, կրպակներում
տեխնիկական հեղուկների վաճառքի թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝10.000դրամ:

6) համայնքի տարածքում առևտրի,հանրային սննդի,զվարճանքի,շահումներով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները,բաղնիքները (սաունաները),խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլատվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝
ա)առևտրի օբյեկտների համար՝ 25.000դրամ
բ)հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50.000դրամ
գ)բաղնիքների/սաունաների/ համար՝200.000դրամ
դ)խաղատների համար՝ 1.000.000դրամ
ե)շահումներով խաղերի և վիճակախաղերի համար՝ 300.000դրամ

7)Համայնքի տարածքում՝ յուրաքանչյուր ամսվա արտաքին գովազդ տեղադրելու թույլատվության համար 1 մետր քառակուսի տեղական տուրքը սահմանել՝
ա)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոսով արտադրանքի գովազդող արտաքին գովազդի համար՝2.000դրամ,
բ)թունդ ալկոհոլային(սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝5.000դրամ,
գ) այլ արտաքին գովազդի համար՝1.000դրամ
դ) դատարկ գովազդային վահանակների համար՝700դրամ:

8)Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլատվության համար սահմանվում է՝5.000դրամ:

9) Աճուրդ-վաճառքների և մրցույթների համար սահմանել յուրաքանչյուր մասնակցից 2.000դրամ մուտքավճար:

10)1.2.3. կետերի դրույքաչափերը կիրառել 0.3 գործակցով:

11) Տեղական տուրքերի և վճարների հաշվարկման և գանձման կարգի պահպանման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղարի վրա:

Երասխի գյուղապետ՝ ՌԱԴԻԿ ՕՂԻԿՅԱՆ